

ՍՓՅՈՒՌԱՆԿՆԵՐ ԿՅԱՆԵՐ ЖИЗНЬ ЗАРУБЕЖНЫХ АРМЯН

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ՀԱՍԱՐԱՊԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

(1965 թ. հունվար-հունիս)

ԲՈՒԼԱՐՈՒՄ

1915 թ. Եղեռնի ժամանակ նահատակված հայ գրողների հիշատակը հավերժացնելու համար հուշ-երեկոներ են կազմակերպվել Սոֆիայի հայկական ակումբում: Զեկուցումներ են կարգացվել Սիմանթոյի, Զոհրապի և մյուսների կյանքի ու ստեղծագործության մասին:

«Աշխարհ», 6 փետրվարի

ՌՈՒՄԻՆԻԱ

Մարտի 3-ին մահացավ ումիդնահայ գրող Ալեքսանդր Շահիկյանը, որը գրական ու հրապարակագրական յայն գործունեություն է ունեցել Բուխարեստում: Նա հանդես է եկել բազմաթիվ հոդվածներով, ուրվագծերով, բանաստեղծություններով, վարել է ղեկավար պաշտոններ գրողների միության մեջ: Հասարակական և գրական գործունեության բնագավառում ցուցաբերած իր արժանիքների համար Շահիկյանը պարգևատրվել է Ռումինական Ժողովրդական Ինսպիրիկայի պատվանշաններով:

«Նոր կյանք», 2 ապրիլի

ՀՈՒՆԳԱՐԻԱ

Ապրիլի 23-ին բուլղարացի ռադիոկայանը հաղորդել է հունգար գրականագետ-պատմաբան Սալմաշ Պալի ելույթը նվիրված հայկական Եղեռնի 50-ամյակին: Այդ կապակցությամբ Բուլղարացի տեղի է ունեցել նաև սգո նիստ: Նման նիստեր տեղի են ունեցել նաև Բուլղարիայում և Ռումինիայում:

«Արարատ», 5 մայիսի

ԼՆՀԱՍՏԱՆ

ԼԼ: գրականագետ Քազիմիր Ռոշկոն լեհերեն է թարգմանել «Սասունցի Դավիթ» դյուցազնավեպը:

«Նոր կյանք», 18 հունիսի

ԿԻՊՐՈՍ

Ապրիլի վերջերին նիկոսիայում հայկական Եղեռնի 50-ամյակին նվիրված սգո հանդեսներ են տեղի ունեցել, որոնցից մեկում ճառ է ար-

տասանել Կիպրոսի հանրապետության խորհրդարանի նախագահ Կլաիբոս Քլերիտեսո:

«Զարթոնք», 7 մայիսի

ԼԻԲԱՆԱՆ

Լիբանանահայ Աղզային վարժարանների Ուսուցիչների Միությունը սկսել է հրատարակել «Մշակ» պարբերականը, որի առաջին համարում հանդես են եկել ինչպես սփյուռքահայ, այնպես էլ Սովետական Հայաստանի մանկավարժները: Պարբերականը ունի տեսական, «Հայ մամուլ» և այլ բաժիններ:

«Արարատ», 21 հունվարի

* * *

Հայ ժողովրդի աղզային հերոս Անդրանիկին (նրա ծննդյան 100-ամյակի կապակցությամբ) նվիրված հոդվածներ է տպագրել լիբանանահայ և ընդհանրապես սփյուռքահայ մամուլը:

*

Բեյրութում Գրական շրջանակի նախաձեռնությամբ լույս է տեսել Սայաթ-Նովայի տաղերի հատընտիրը արաբերեն լեզվով: Հատորի առաջաբանը գրել է լիբանանցի անվանի բանաստեղծ Սաիւր Աթուր, տաղերի թարգմանիչներն են լիբանանցի գրողներ Ռաիֆ Խուրին, Կոկտ, Միշել Սլեման և արձակագիր Արմեն Դարյանը: Հատորում ղեկավարված է նաև սայաթ-նովագետ Մորուս Հասրաթյանի ուսումնասիրությունը՝ նվիրված Սայաթ-Նովային:

«Աշխարհ», 26 հունիսի

* * *

Բեյրութում նշվել է սովետահայ քնարերգու Հովհաննես Շիրազի հիսնամյակը: Բանաստեղծի գրական գործունեության մասին ելույթներ են ունեցել Գ. Աղզարյանը և Ա. Մառուկյանը: Երեկոյթին ներկա են եղել Սովետական Միության Լիբանանի դեսպան Դիմիտրի Նիկի-

Ֆորովը, Նիրանանի և ՍՍՌՄ միջև մշակութային կապի ընկերակցության նախագահ դուկտ. Ժորժ Հաննան, լիբանանահայ մշակութային անվանի դեմքեր, արար գրողներ և բաղմահարյուր գրասերներ:

«Աշխարհ», 27 մարտի

* *

Մարտի 7-ին Բեյրութում հանդիսավորությամբ բացվել է Վ. Խեքեյան վարժարանի նորակառույց շենքը: Բացմանը ներկա են եղել հայ և օտար բազմաթիվ անձինք: Ելույթ ունեցողների թվում է եղել նաև լիբանանի փոխվարչապետ Մեծտևիկեն:

«Աշխարհ», 9 ապրիլի

* *

Սփյուռքահայ մամուլում բազմաթիվ հոդվածներ են տպագրվել 1915 թ. հայկական մեծ Նդեռնի մասին:

Ապրիլի 23-ին Բեյրութում տեղի է ունեցել 1915 թ. հայ նահատակ գրողների հիշատակին նվիրված սգո երեկո: Երեկոյին մասնակցել են անվանի գրողներ, մշակութային կազմակերպությունների ներկայացուցիչներ, արար գրողներ և դեպուտատ, գորավար Ճեմիլ Հահուտը:

«Երաբեր», 22 մայիսի

* *

Ապրիլյան Նդեռնի 50-ամյակի կապակցությամբ 100.000 հայերի ցույց է տեղի ունեցել Բեյրութում: Մեծ սգահանդեսներ են տեղի ունեցել նաև Կահիրեում, Հալեպում, Դամասկոսում, Բաղդադում և արաբական այլ քաղաքներում:

Արաբական շատ թերթեր հատուկ հոդվածներ են նվիրել Նդեռնի ղոհների հիշատակին:

«Արաբատ», 4—8 մայիսի

Ա Մ Ի

Մարտի 24-ին Կահիրեում բացվել է նկարիչների ցուցահանդես, որին մասնակցել են հարյուր արվեստագետներ իրենց 137 գործերով: Ցուցահանդեսի առաջին մրցանակը ոսկե մեդալով շահել է եգիպտահայ նկարիչ Սիմոն Սամսոնյանը, իսկ երկրորդ մրցանակը՝ Բյուզանդ Վոնամանյանը:

«Զարթոնք», 14 մարտի

* *

Կահիրեի Հայկական ընթերցասրահի վարչությունը կազմակերպել է դասախոսությունների շարք, որոնցից առաջինը նվիրված էր հայկական օպերայի պատմությանը: «Հայկական

օպերայի ծագումը և զարգացումը» թեմայով դասախոսություն է կարդացել էդուարդ Հակոբյանը, որը մասնավորապես անդրադարձել է Տիգրան Զուխաթյանի, Ալեքսանդր Սպենդիարյանի և Արմեն Տիգրանյանի ստեղծագործություններին: Դասախոսությունից հետո կատարվել են հատվածներ հայկական օպերաներից և ցուցադրվել են բազմաթիվ լուսանկարներ:

«Զահակիր», 5 դեկտեմբերի

Ալեքսանդրիայում հունիսի 13-ին տեղի է ունեցել 1915 թ. նահատակների հուշարձանի հանդիսավոր բացումը:

«Աշխարհ», 3 հունիսի

Ի Ր Ա Ն

Թեհրանում հրատարակվեց Գրիգոր Զոհրապի պատմվածքների ժողովածուն՝ «Տասնյոթ պատմածք» խորագրով, հեղինակի լուսանկարով: Իրթը լույս է տեսել Թովմասյան եղբայրների տնօրինությամբ և Թեհրանում ստեղծված «Երական միության» նախաձեռնությամբ, որը նպատակ ունի պարսիկ հասարակայնությանը ծանոթացնել հայ գրականության, պատմության ու մշակույթի հետ:

Գրքի առաջաբանը գրել են պատմվածքների թարգմանիչ Ալրերտ Բերնարտուն և պարսիկ գրականագետ դոկտոր Ալիասգար Սադր Հաճ Սէիտ Զավագին: Ժողովածուի մեջ տեղ են գտել Զոհրապի հետևյալ ստեղծագործությունները. «Անդրշիրիմի սերը», «Երջանիկ մահը», «Սառած», «Փոթորիկը», «Ժիտին պարտքը», «Կարծեմ թե», «Մազդադին», «Ժեյրան», «Միսը», «Զարուղուն», «Ռեհան», «Կատակ», «Ֆուրթունա», «Կապիկը», «Խնդուր», «Սխալ», «Անհավատարիմը»:

«Նոր կյանք», 12 մարտի

ԽՈՒՐԲԻԱ

4. Պոլսում տեղի հայկական երաժշտական խումբը հանդիսավոր ձևով նշել է Կոմիտասի ծննդյան 95-ամյակը: Ցերեկային ներկա են եղել Կոմիտասի սաներից մի քանիսը: Բացման խոսքով հանդես է եկել Սրբուհի Վարդանյանը: Կոմիտասի մասին զեկուցում է կարդացել Խահարիկ Ղազարյանը: Վերջում Կոմիտասի ստեղծագործություններից մի քանիսը կատարել է Ատրինե Մխիթարյանը:

«Զարթոնք», 26 հունվարի

* *

4. Պոլսի Մշակութային Թատերասիրաց Միությունը երեկոյթ է կազմակերպել նվիրված Հակոբ Պարոնյանի կյանքին ու գործունեությանը:

Հակոբ Այվազի բացման խոսքից հետո դասախոսել է Ատրինե Տատրյանը՝ Տեղի է ունեցել նաև զեղարվեստական բաժին։

«Աշխարհ», 10 ապրիլի

ՅՐԱՆՈՒՍ

Փարիզում մարտի 11—19-ին երեկոներ են կազմակերպվել՝ նվիրված հայ բանաստեղծությանը։ Ֆրանսիացի երիտասարդ արվեստագետները ֆրանսերեն արտասանել են նարեկացու, Քուլակի, Սայաթ-Նովայի, Մեծարենցի, Զարենցի և Շիրազի տաղերն ու բերթվածները։ Երեկոների կազմակերպիչն էր Ժան-Ժակ Ասլանյանը, թարգմանությունները կատարել են Լյուր-Անտրե Մարսելը, պրոֆ. Ֆ. Ֆեյդին և Ժերար Հեբրմյանը։

«Աշխարհ», 27 փետրվարի

* *

Ֆրանսահայությունը լայնորեն նշել է մեծ եղևունի հիսնամյակը։ Սկզբից միտինգներ են տեղի ունեցել Ֆրանսիայի մի շարք քաղաքներում՝ Փարիզում, Մարսելում, Լիոնում, Վալանսիենում, Բելֆորում, Սեն-Եմոնտում և այլուր։

Եղևունի 50-ամյակը նշվել է նաև Լոնդոնում, Ժնևում, Աթենքում, Միլանում, Վիեննայում և եվրոպական շատ այլ քաղաքներում։

«Արարատ», 30 ապրիլի

* * *

Հայկական մեծ եղևունի հիսնամյակի կապակցությամբ Ֆրանսիայի կոմպարտիայի օրգան «Յումանիտե»-ն իր 1965 թ. ապրիլի 23-ի համարում գետնից է խմբագրական հոդված, որի միջի այլոց ասված է. «...1965 թ. ապրիլի 24-ին բոլոր երկրները, որտեղ հայեր կան, այդ թվում Սովետական Հայաստանը, կնշեն 1915 թ. ջարդերի 50-ամյակը։

Այդ սարսափելի իրողության պատմությունը անհնար է մի քանի բառով պատմել, երբ ավելի քան մեկ միլիոն 500.000 հայեր առանց սևուրի և տարիքի խտրության, վայրագորեն, հետևողականորեն, այն ժամանակվա թուրք կառավարության լուրջ կանխամտածված ծրագրով ջարդվեցին։

Բավական է ասել, որ սա մի ապրող ազգի հանդիպ կատարված ցեղասպանության առաջին ուժերն էր՝ XX դարի սկզբին, 1914—1918 թթ. պատերազմի ընթացքում։ Նվազապես միլիոն երեք չղատվեց և չղատապարտվեց։

500.000 փրկված հայեր, փախչելով Կովկաս, Սովետական Հայաստանում վերագտան իրենց նախնիների տերիտորիայի մի մասը։

1915 թվականից եվրոպայում, հատկապես Ֆրանսիայում բարձր հնչեց թշվառ զաղթական-

ներին փրկելու ձայնը՝ Անատոլ Ֆրանսի, Մարսել Կաշենի, Իվ Ֆարժի և շատ ուրիշների ձայնը։ Արժանին պետք է հատուցել նրանց մարդասիրական խղճին և կորոպին։

«Յումանիտե», 23 ապրիլի

* *

Փարիզի «Լը Մոնդ» թերթը 1965 թ. ապրիլի 3-ի համարում գետնից է Ֆրանսիայի Արևելյան կենդանի լեզուների Ազգային դպրոցի պրոֆեսոր, նշանավոր հայագետ Ֆրեդերիկ Ֆեյդիի «Հայերի ջարդը Թուրքիոյ մեջ» ընդարձակ հոդվածը, որտեղ շոշափված է նաև հայ ժողովրդի անցյալի ու ներկայի պատմությունը։ Ֆ. Ֆեյդիի այս հոդվածը թարգմանաբար տպագրել են սփյուռքահայ մի շարք թերթեր։

Մեծ եղևունին նվիրված հոդվածներ են տպագրել նաև եվրոպական բազմաթիվ այլ թերթեր։

«Նոր կյանք», 21 մայիսի

Ֆրանսահայ բանաստեղծուհի Մառի Աթմաճյանը պարզեցնելով իր «Փարիզ քաղաքի» արձագանքը և «Լը Մոնդ» նասիոնալ ֆրանսեզի» ոսկե շրանշաններով ու պատվո վկայականներով ֆրանսահայ մշակութային կապերի զարգացմանը մեծ օժանդակություն ցույց տալու համար։

«Նոր կյանք», 12 մարտի

* * *

Նշանավոր հայագետ, Հայկական ՍՍՏ գիտությունների ակադեմիայի արտասահմանյան անդամ Սիրարփի Տեր-Ներսեսյանը Փարիզի Հնագիտության կաճառում դասախոսություն է կարդացել հայկական նկարչության և քանդակագործության մասին։

«Զարթոնք», 30 հունվարի

* * *

Ֆրանսահայ երիտասարդության Միությունը կազմակերպել է հատուկ զասրնթացներ երիտասարդության համար, որտեղ պետք է ուսուցվեն հայոց լեզու, գրականություն, պատմություն և Հայաստանի քաղաքական ու տնտեսական աշխարհագրություն։

«Արարատ», 16 ապրիլի

ԱՆՅԵԼԻՍ

Անգլիայի հայ գաղութը լույս է բնծայել իր ամսաթերթը՝ «Արևիկ» անունով, որի հատուկ համարը նվիրված է մեծ եղևունի հիսնամյակին։

«Զարթոնք», 1 հունվարի

* * *

Ֆրանսահայ երաժշտադեստ Ա. Մեսսումենցը դասախոսություն է կարդացել Հոնգոնի շալ Տան մեջ՝ «Արարկիրի հայ ժողովրդական երգերը» թեմայով: Դասախոսությունից հետո ունկրնդիրները լսել են այդ երգերից ձայնագրված նմուշներ: Մեսսումենցը հավաքել և դրի է առել նաև Շապին-Գարահիսարի, Եղեսիայի, Չմշկաժողի և Չարունի ժողովրդական երգերը:

«Սոր կյանք», 30 ապրիլի

Փետրվարի 12-ին Հոնգոնի շալ Տան սրահում Ա. Նասիպովան դասախոսություն է կարդացել Հայաստանի կրթական և մշակութային կյանքի մասին: ՀՍՍՌ Լուսավորության մինիստրության հրավերով նա 1964 թ. եղել է Հայաստանում:

«Աշխարհ», 3 ապրիլի

ԻՏԱԼԻԱ

Վենետիկի Միսիթարյանների տպարանը այս տարի լույս է բնծայելու Ս. Ղազարի վանքի ձեռագրատան հայ մանրանկարների ալբոմ՝ առաջաբանով և ուսումնասիրությամբ: Ալբոմը պետք է հրատարակվի չորս լիզով՝ հայերեն, ֆրանսերեն, իտալերեն և անգլերեն: Ալբոմը հրատարակող կազմակերպական մարմնի անդամներ են՝ անվանի մասնագետներ Սիրարփի Տեր-Ներսեսյանը (ԱՄՆ), Ֆ. Ֆեյդին (Ֆրանսիա), Զ. Դաուսեթը (Անգլիա), Շ. Տերտերյանը (Փարիզ), Ե. Ասլանը (Իտալիա) և այլ հայագետներ:

«Նոր կյանք», 30 ապրիլի

ՇՎԵՊԻԱ

Շվեդացի գրող Կարլ Սվենինկը շվեդերեն է թարգմանել Հովհ. Թումանյանի երկու պատմվածքները՝ «Արջաորս» և «Աղքատի պատիվը», որոնք հրատարակվել են շվեդական «Սեա» և «Կոմունալ Արպեթարեն» հանդեսներում: Սվենինկը թարգմանել է նաև հատվածներ «Սասունցի Դավիթ» դյուցազնավեպից և Կ. Լեմինի «Երկու ճամփա» ժողովածուից մի բանաստեղծություն:

«Նոր կյանք», 18 հունիսի

ԱՐԴԵՆՏԻՆԱ

Փետրվարի 5-ին արգենտինահայ Մշակութային Միության Տան մեջ տեղի է ունեցել դասախոսություն՝ նվիրված մեծ Եղեռնի 50-ամյակին: Դասախոսել է Ա. Գրաճյանը՝ իսպաներեն լեզվով, հանգամանորեն կանգ առնելով երիտթուրքերի ցեղասպան քաղաքականության վրա:

Բուենոս-Այրեսում ապրիլի վերջերին տեղի է ունեցել սգահանդես՝ նվիրված մեծ Եղեռնի ժամանակ զոհված նահատակների հիշատակին:

«Սեան», 17 փետրվարի:

«Արարատ», 12 մայիսի

ՈՒՐՈՒԿԱՅ

1965 թ. փետրվարի 1-ին Ուրուգվայի պառլամենտի նիստում ղեկուստատ Մարթինես Մորենոն ելույթ է ունեցել ապրիլյան Եղեռնի մասին: Այս կապակցությամբ «Աշխարհ» թերթը գրում է. «Մասնավորելով իր խոսքը ուրուկուէյցիներուն, պրն. Մորենո ըսած է, որ Ուրուկուէյ և իր ժողովուրդը պարտին սգակցիլ հայության՝ յառաջիկայ Ապրիլ 24-ին, քանի որ 1965-ի Ապրիլ 24-ը հայկական մեծ կոտորածին յիսնամյակը կրիտորհրդանշէ: Երեսփոխանը առաջարկած է, որ 1965-ի Ապրիլ 24-ը պաշտոնական սուգի ու յարգանքի օր հռչակուի Ուրուկուէյր մեջ, որպէնզի ուրուկուէյցիներն ալ արժանաւորապէս սրտակցություն յայտնած ըլլան իրենց հայ եղբայրներուն: «Պետական հանգամանքով յարգանք մը կը պարտինք ընծայել հայ ժողովուրդին, որ զուն է բռնակալ ու տիրող ուժերու կողմէ իր դեմ գործուած անարգարություններուն», — շեշտած է պրն. Մորենո իր ելույթին մեջ: Ուրուկուէյի երեսփոխանական ժողովը համակրանքով ընդունած է իր աշխատուանդամներն պրն. Մորենոյի առաջարկը և 1965-ի Ապրիլ 24-ը պաշտոնական սուգի օր հռչակած է»:

«Աշխարհ», 13 մարտի

ԱՄՆ

Կալիֆորնիայում տեղի է ունեցել երիտասարդ վիրտուոզ արվեստագետների միազգային մրցում, որտեղ առաջնությունը շահել է լիբանանահայ չութակահար Վարուժան Գոճյանը: Ժյուրիի անդամները նրան հրավիրել են մասնակցելու Ֆրեզնոյի ֆիլհարմոնիայի նվագախմբի երկու համերգներին:

«Զարթոնք», 16 ապրիլի

* *

Հույս է տեսել Ուասա Մոերը՝ անգլերեն լեզվով, Հետն Զ. Սուրմելյանի թարգմանությամբ: Գիրքը հրատարակվել է Հայոց բարեգործական ընկերության կողմից: ԷՆՍ-Անշելոս Թայմզ օրաթերթը իր 1965 թ. հունվարի 11-ի համարում զետեղել է Բապրթ Բ. Քրրչի գրախոսականը Սուրմելյանի թարգմանության մասին, ուր բարձր գնահատական է տրվում կատարված աշխատանքին:

«Լրաբեր», 6 փետրվարի

✓ 1915 թ. Եղևնի հիսնամյակի կապակցությամբ Երևանի և սգահանոցներն են կազմակերպվել Բոստոնում, Ֆրեզնոյում, Դետրոյտում, Նյու-Յորքում, Լոս-Անջելոսում և այլուր: Հազարավոր հայեր ու օտարազգիներ մասնակցել են այդ առթիվ կազմակերպված ցույցերին: Եղևնին նվիրված հողվածներ են տպագրել ամերիկյան բազմաթիվ թերթեր:

«Երաներ», 8 մայիսի

Նյու-Յորքում լույս է տեսել «Սասունցի Դավթի» անգլերեն թարգմանությունը Հարություն Շալյանի թարգմանությամբ: Գրքի առաջաբանը

գրել է Ռիչոյսի համալսարանի դասական դրականության վաստակավոր պրոֆեսոր Պեն Էտուն Փիրրին:

«Երաներ», 16 փետրվարի

* * *

Ամերիկյան հասարակայնությանը Սայաթ-Նովայի գործերին ծանոթացնելու նպատակով տպագրության է հանձնված մեծ երգչի ստեղծագործությունների հատընտիր թարգմանությունը անգլերեն լեզվով: Հատընտիրը թարգմանել է Վալիֆորնիայի համալսարանի դասախոս, անգլերեն լեզվի և գրականության դոկտոր Արամ Թուլգյանը:

«Աշխարհ», 29 մայիսի
Ն. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԻՆՏԵՆՑԻՎԱՅԻ ՀԱՅ ԳԱՂՈՒԹԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԸ

Հետազոտ Բեդենեգիայի փոքրաթիվ հայ գաղութը մոտավորապես 300 տարվա պատմություն ունի: Առաջին հայերը, որ մուտք են գործել այս երկիրը, Նոր-Ջուզալից և Հեդկասաանի զանազան քաղաքներից գաղթած վաճառականներ էին: Հետագայում՝ XVIII դարում արագ թափով սկսեց ստվարանալ հայության թիվը՝ գլխավորապես ճափա կղզում:

Մենք արդեն առանձին հոդվածով տվել ենք Բեդենեգահայ գաղութի պատմության ընդհանուր գծերը¹, ուստի այստեղ կանդրադառնանք միայն գաղութի մշակութային կյանքին:

Բեդենեգահայ վաճառականները չէին սահմանափակվում սոսկ առևտրական գործունեությամբ: Նրանք միաժամանակ հանգես էին դառնում որպես մշակութային և կրթական գործի ստանդարտներ: Թեև Բեդենեգիայի հայերը մեծ թիվ չէին կազմում, բայց այս ուղղությամբ իրենց ունեցած նպաստներով և նախաձեռնություններով ուշադրով տեղ չէին զրավում ժամանակի հայ գաղութների շարքում:

XIX դարի կեսերին նվթապաշի, Ասիայի և Հասկապետ Հեդկասաանի հայ գաղութներում ծավալվող մտավորական շարժումը ողորկություն էր առաջացնում մայր հայրենիքից և նրա մտավորական կենտրոններից հեռու գտնվող Բեդենեգահայերի փոքրիկ գաղութում:

Բեդենեգիայի հայերի մշակութային ամենաբնորոշ արտահայտությունը գաղութ-կրթական

գործի հիմնադրումն է: Գաղութի մտավորականությունը խորապես զիտակցում էր, որ հայերի մտավոր և բարոյական առաջադիմությանը նպաստող կարևոր ազդակներից մեկը ազգային կրթական հաստատությունն է: Եվ ահա մի շարք գործիչների եռանդուն ջանքերով 1855 թ. Բառափայտում հիմնվում է «Մանուկ և Հարություն» ուսումնարանը, իսկ հետագայում նրան կից՝ մի գրադարան, ուր պահպանվել են ինչպես հայերեն, այնպես էլ օտար լեզվով գրքեր: Նպատակ չունենալով մանրամասնորեն կանգ առնել գաղութի գործունեության վրա, նշենք, որ այդ գաղութում, բացի հայերից, սովորում էին նաև եվրոպացիներ²: «Մանուկ և Հարություն» ուսումնարանում դասավանդվող առարկաների զրվածքի, ուսուցման մեթոդների մասին հանգամանորեն պատկերացում է տալիս գաղութի կանոնադրությունը: Այստեղ նշվում է, թե ինչ մեծ դեր է կատարում մայրենի լեզուն ազգային կյանքի պահպանման գործում և շեշտվում է գաղութներում ազգային գաղութներ հիմնելու կարևորությունը³: Ուսումնարանում դասավանդում էին կարող մանկավարժներ, որոնք ամբողջ էությամբ նվիրված էին նոր սերնդի ուսման և դաստիարակության աղնիվ գործին: Նրանք միաժամանակ գաղութում ծավալում էին մշակութային հասարակական ակտիվ գործունեություն: Բեդենեգահայ մտավորականների գործունեության բնագավառները տարբեր

1 Տե՛ս Ա. Ա. և ուրիշ, XIX դարի հայ աղաքագրական շարժումները և Բեդենեգիայի հայ գաղութը, Հայկական ՍՍՏ ԳԱ «Տեղեկագիր», 1963, № 7, էջ 77—86:

2 Թ. Գ. և ուրիշ, Հեդկահայեր, Որոտադեմ, 1941, էջ 274—277:

3 «Արշալույս» Արարատյան, Ջմյուռնիք, 1861, № 662: